ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հունվարի 3-ին նախագահական հատուկ ինքնաթիռով Ֆրանսիա մեկնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Հայաստանի Հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ միասին, ներկա գտնվելու Շառլ Ազնավուրի կազմակերպած «Սուրբ Ծնունդը Հայաստանի երեխաների համար» բարեգործական համերգին:

Հուվարի 4-ին Վեհափառ Հայրապետը Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցում քարոզեց հընթացս Ս. Պատարագի, այնուհետև հանդիպեց ֆրանսահայ համայնքի ներկայացուցիչների հետ, պատասխանեց ֆրանսիացի՛ և հայ լրագրողների հարցերին: Համերգի ընդմիջմանը Նորին Սրբությունը կարճատև զրույց ունեցավ Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակի հետ, իսկ երեկոյան մասնակցեց Փարիզի քաղաքապետարանում կազմակերպված ճաշկերույթին:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ վերադարձավ հունվարի 5-ին:

Հունվարի 14-20-ը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական իր անդրանիկ այցը կատարեց Եգիպտոսի հայոց թեմ: Հովվապետական անդրանիկ այս այցելության ընթացքում Վեհափառ Հայրապետը պատարագեց և քարոզեց թեմի եկեղեցիներում, այցելեց համայնքի կրթա-մշակութային և հասարակական հաստատություններ: Նորին Սրբությունը Եգիպտոսում ունեցավ նաև մի շարք պաշտոնական հանդիպումներ երկրի պետական ղեկավարների ու հոգևոր կրոնապետերի հետ, հունվարի 18-ին Կահիրեի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Ղպտի Ուղղափառ եկեղեցու պետ Շընուդա Գ Պատրիարքի հետ ստորագրեց Համատեղ հայտարարություն:

Ավարտելով հայրապետական այս այցելությունը, հունվարի 24-ին Գարեգին Ա Վեհափառը մեկնեց Գերմանիա՝ հովվապետական առաջին այցելությունը տալու Գերմանիայի հայոց թեմին:

Վեհափառ Հայրապետի՝ Եգիպտոս և Գերմանիա կատարած այս երկու այցելություններին հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ համարում: